

Բ

Վենետիկն իր պալատներով մարմարե
 Կը ձըգե վրադ ըստուերն իր լայն, միամած,
 Բուրգի մը պես՝ որուն ներքեւ կը նիրհե
 Արծիւն՝ ամփոփ՝ արեւն հոգւոյն մէջ բանտած:

Քաղաքն այդ խաժ ալիքներուն երեսին
 Յըցուած կայմին ծայրն Է նաւուն ջըրասոյգ,
 Արիւնաթորմ ծըւենն Է ան խլայի մ'հին,
 Տոժի մը գանկն Է՝ իր փոսէն ինկած դուրս:

Դու ներշնչուած, ահ՛, այդ անգին ծըւենէն՝
 Ժողվեցիր ծուէնքը Աշխարհիդ խլաներուն՝
 Փըլուզներու, փոշիներու ներքեւէն,
 Եւ ծայրերէն քըղանցառու ցախերուն:

Ժողվեցի՛ր, վագք մ'ամնելով դէպ խըլուած Փառք,
 Բիբդ՝ արցունքոտ, սիրտդ ովկիան՝ վիրամած,
 Եւ սըրբեցիր՝ զանոնք ըրած դաստառակ՝
 Աչքդ ու աչքե՛րը Սերունդին կեղեքուած:

Քօղէն մութի, մոռացումի, լըռութեան
 Յանեցիր մեր դափնիներու թերթերն հին,
 Եւ դընելով զանոնք երգի մը վրան՝
 Առէ՛ք, ըսիր, վիրածոր շողն Անցեալին:

Ծըռած՝ սըրտին հայ՝ սերտեցիր ու դարձար
 Իւրաքանչիւր խորքն անկիւնի եւ ծալքի.
 Իջար անոր ամէն անդունդն հըրավառ
 Եւ քըրքրեցիր ճընշըւած խորշն արցունքի: